№ 239 Դեկտեմբերի 23 1881 Դեկտեմբերի 23 № 239

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կօպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
„ՄՇԱԿ"
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ
ԵԿՈՂ 1882 ԹՒԻՆ
(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով:

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուբլ է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլ: Հատով համարները 5 կօպէկ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Վերին-Ագուլիսից: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Порядокъ» լրագրի թղթակցութիւնը: Իտալիա: Գերմանիա:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: «Օրիորդ Բերոյեանց» կօմեդիա Քիշմիշեանցի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Դեկտեմբերի 11-ին

«Մշակի» 203 համարի մէջ տպված պ. Գրիգոր Նիկողոսեանի նամակը, որի մէջ նա նկարագրել էր Կ. Պօլսի որբանոցի թշուառ ու անմխիթար դրութիւնը, և որով նա հրաւիրում էր Ռուսաստանի հայերին օգնել յիշեալ որբանոցին, — մեր ուսումնարանի օրիորդաց սրտերի մէջ մի ցաւակցական եռանդ ձգեց, և բարձր դասատան աշակերտուհի օր. Սաթենիկ Ազամիրզեանցը, ցանկանալով օգնել իր որբ քոյրերին, հանգանակութիւն բացեց, և, ինչպէս լսվում է, արդէն երեսուն րուբլ փող է ժողովել: Այդ գեղեցիկ ձեռնարկութեան համար թէ օրիորդների և թէ մանաւանդ օր. Ազամիրզեանցի մարդասիրական վարմունքը խորին համակրութեան արժանի է:

Աւելորդ չեմ համարում հաղորդել մի դէպք, որ այս րօպէին զբաղեցրել է մեր հասարակութեանը: Մեր դպրոցների կրօնուսոյց վարդապետը, լսելով, որ օրիորդները կարդում են «Ռօբինզօն» և «Անահիտ», խստիւ հրամայում է առնել նրանցից այդ գրքերը և կամենում է պատռել, մի և նոյն նոյն ժամանակ, սպառնալով որ նրանք միւս անգամ չը համարձակվեն այդպիսի վնասակար գրքերը կարդալու: Այդ բաւական չէ. քանի օրից յետոյ կրօնուսոյցը մտնում է դասատուն, բերելով իր հետ «Արարատ» ամսագիրը ու բաժանում է օրիորդներին, ասելով. «ուզում էք բան սովորել, ահա այդ պատուական ամսագիրը կարդացէք»...

Բայց ինչ է անում հոգաբարձութիւնը, ինչ է անում տեսուչը, միթէ կարելի է այնքան թոյլ գտնվել, որ «Արարատը» ուսումնարանի մէջ իբրև ընթերցանութեան գիրք ընդունվի: Ողորմելի ուսումնարան:

Ուսումնարանի, կամ հոգաբարձութեան մասին երբ մի բան է գրվում լրագիրներում, հոգաբարձուք սաստիկ նեղանում են, իսկոյն շտապում են պատասխանել, իրանց արդարացնել, չը նայելով, որ միայն իրանք են մեղաւոր և ոչինչ սուտ բան չէ գրված:

Հոգաբարձութիւնը բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում աղքատ դասի օրիորդների հագուստի վրա: Այժմեան անտանելի ցրտին նրանցից շատերը տաք ոտնամաններից և հագուստից զուրկ են: Ո՞ւր մնաց տիկին Թ. Արասխանեանցի յօգուտ աղքատ աշակերտուհիների նուիրած 300 ր. փողը և ինչու հոգաբարձութիւնը օգուտ չէ քաղում այդ գումարից:

Ո՞ւր մնաց աղքատաց 3000 րուբլու հաշիւը. այդ գումարը շահեցողութեան համար բանկումն է գտնվում, թէ մասնաւոր անձանց մօտ է դրված: Հրաւիրում եմ պ. պ. հաշւատեսների ուշադրութիւնը այդ գումարի վրա:

Ա.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Դեկտեմբերի 17-ին

Այստեղ օրվայ նորութիւնը մի սարսափելի եղեռնական դէպք է: Գաւառական կեանքը այնքան միակերպ է, այնքան անշարժ է, որ հարկաւոր են բուռն զգացմունքներ այդ ձանձրութիւնը փարատելու համար: Սպանութիւնները այստեղ այնքան հազիւ են պատահում, որ մենք կարծում ենք թէ այդպիսի դէպքեր ուրիշ տեղեր էլ չեն պատահում: Այժման դէպքի առարկան մի դեռահաս, 16 տարեկան օրիորդ է, որին փոքրութեան ժամանակ վերցրել էին իրանց մօտ պահելու, նրա մօտ ազգականները, տեղիս հարուստ Մարգարեանցները: Օրիորդը նշանադրված էր:

Նոյն Մարգարեանցների տանը մնում էր իբրև ծանօթ և ազգական, այստեղի հեռագրատան ծառայող, ախալցխացի մի 16—17 տարեկան երիտասարդ, Ա. Ղալամքարեանց:

Կարծում են թէ երիտասարդը սիրահարված է եղել օրիորդի վրա: Ամսիս 15-ին, սպանողը գնում է աղջկայ մօտ, որը մի առանձին սենեակում կարում է եղել իր հարսնութեան շորերը: Պատրուակներով նա դուրս է անում սենեակից փոքր երեխաներին, այնպէս որ սենեակում մնում է միակ վկայուհի մի փոքրիկ աղջիկ:

Սպանողը միւս սենեակից վեր է առնում րէվօլվէրը և ինչ որ պահանջում է օրիորդից, սպառնալով հակառակ դէպքում սպանել կամ նրան կամ իրան: Բայց երբ օրիորդից բացասական պատասխան է ստանում, նա վեր է քաշում րէվօլվէրի ոտիկը, արձակում է, բայց ճայթիւն չէ առաջանում: Անմիջապէս նա կրկին է բարձրացնում ոտիկը և արձակում: Գնտակը դիպչում է օրիորդի ճակատին, ձախ աչքից բարձր: Նրա ուղեղը վնասվում է, բայց 5—6 ժամ դեռ էլի ապրում է սարսափելի օրհասական տանջանքների մէջ, առանց կարողանալու խօսել: Սպանողը սաստիկ սառնարիւնութեամբ դնում է րէվօլվէրը պատեանի մէջ, քաշ է անում պատից և առաջին անգամ հարցնողներին պատասխանում է թէ օրիորդը անակնկալ կերպով սպանվել է հրացանի յանկարծ արձակվելուց: Նա գնում է հիւրանոց և սկսում է բիլիարդ խաղալ: Զրկել մի ծաղկափթիթ կեանք գոյութենից և լրբութիւն ունենալ դեռ զուարճանալ, մեզ այն եզրակացութեանն է հասցնում, որ սպանողը կամ հոգեկան հիւանդութեան ենթակայ է, կամ մի դեռահաս հրէշ է:

Այդ տխուր դէպքի վկայուհի օրիորդը պատմում է քննիչին եղելութիւնը և սպանողը ինքն էլ տեսնելով, որ անկարելի է հրաժարվել, խոստովանում է, միայն ասում է որ դա պատահել է անակնկալ կերպով: Սպանողը կալանաւորված է:

Այս տողերը ես գրել եմ մասամբ վկայուհի աղջկայ ցուցման և մասամբ ժողովրդի մէջ տարածված լուրերից աւելի հաւատալիների վրա հիմնվելով: Յոյս ունենք որ քննութիւնը կը բաց անէ այդ անցքի տխուր մանրամասնութիւնները և շարժառիթները:

Անցեալ օր ընտրեցին այստեղ նոր դէպուտատներ: Ընտրողական սկզբունքի վրա մեր հասարակութիւնը համարեա հասկացողութիւն չունի: Ոչ ոք չէ մտածում ընտրել արժանաւոր անձին: Գէ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ» կօմեդիա երեք արարուածով, հեղինակութիւն Ալէքսանդր Քիշմիշեանցի

—

IV

Քիշմիշեանի պիէսայի տիպերը քննելուց յետոյ, այժմ մի քանի խօսք պէտք է ասեմ պիէսայի թէ արժանաւորութիւնների և թէ պակասութիւնների վրա, տեխնիկական տեսակէտից:

«Օրիորդ Բերոյեանց» պիէսայի գլխաւոր արժանաւորութիւնն այն է, որ ինքնուրոյն պիէսաների մեր այժմեան երաշտութեան ժամանակ, նա փորձ է փորձում ներկայացնել հասարակութեանը մի կենդանի հոգեբանական քննութիւն մեր ժամանակակից կեանքի, աշխատելով վճռել հասարակական հարցերը առանց բռնի միջոցների, առանց մահվան, սրի, հրացանի, սրճանակի կամ թոյնի: Մահը շատ անգամ անհրաժեշտ է, բայց մահով լուծել հասարակական խնդիրները, մեծ մասամբ ապարդիւն, թէև շատ հեշտ մի միջոց է: Մահը մեծ մասամբ ոչինչ չէ ապացուցանում և բեմից կամ ռօմանի էջերից չէ սովորեցնում ժողովրդին թէ նա ինչպէս պէտք է լուծի այս կամ այն հասարակական խնդիր:

Երկրորդ արժանաւորութիւնը Քիշմիշեանի պիէսայի նրա մէջն է կայանում, որ չունի հայոց և վրաց պիէսաներին յատուկ երկար մօնօլօգներ և դիալօգներ, չունի երկար ու բարակ մալաղաթներ, այլ անցնում է շուտ և կենդանի կերպով, այնպէս որ երեք գործողութիւնների ընթացքում հանդիսականը ոչ մի րօպէ չէ ձանձրանում: Մօնօլօգները և դիալօգները կարճ են և ամփոփ, տեսիլները կենդանի են և յաճախ փոփոխվող:

Բայց ահա և պիէսայի պակասութիւնները, իմ կարծիքով:

Առաջին և գլխաւոր պակասութիւնը նոյն իսկ դրա մէջն է, որ հեղինակը աչքի առջև ունենալով մի շատ ընդարձակ պրօգրամ, այնու ամենայնիւ սեղմել է իր ամբողջ գրուածքը երեք գործողութիւնների մէջ, փոխանակ չորս կամ հինգ գործողութիւն անելու: Արդեօք այդ այն պատճառով է պատահել, որ հեղինակը դեռ վարժ չէ բեմական տեխնիկական ձևերին, թէ չէ վստահացել առաջին անգամ հրապարակապէս հանդէս դուրս գալ շատ ընդարձակ պիէսայով և համեստութենից շարժված ուզեցել է միայն երեք գործողութեան, աւելի փոքրիկ, աւելի համեստ գրուածք ներկայացնել: Ինչ և իցէ, բայց նրա պրօգրամը մնացել է նոյն ընդարձակ, միայն սեղմվել, սահմանափակվել է աւելի նեղ շրջանակներում: Դրանից, իմ կարծիքով, բղխում են պիէսայի տեխնիկական անկատարելութեան մանրամասնութիւնները:

Երկու ախոյեանները, Ջանումեանց և Աթոյեանց ամբողջ պիէսայում ոչ մի անգամ միմեանց չեն հանդիպում, չեն չափում իրանց ոյժերը, չեն խօսում միմեանց հետ. հակառակ և միմեանց ատող բանակներին պատկանելով, չեն ջանում մին միւսին ճակատ առ ճակատ հանդիպել, միմեանց համոզել, միմեանց յաղթել:

Գուլեանց թէև ծաղրում է Ջանումեանցի ազգասիրութիւնը, նրա անվերջանալի ստորագրութիւնները, բայց դարձեալ լաւ տղայ է համարում նրան: Աթոյեանցներին նա դառն կերպով ծաղրում է, շատ լաւ հասկանալով թէ նրանք ակնկալութիւններ ունեն միմիայն իր քսակի վրա: Բայց յանկարծ նրա տրամադրութիւնը կատարելապէս փոխվում է և նա ուզում է տեսնել իր աղջկան պսակվել Աթոյեանցի հետ, որի մասին և որի հօր մասին նա առաջ դառն արհամարհանքով էր խօսում: Ինչ է պատահել, ինչ փոփոխութիւն է եղել, որ տակն ու վրա է արել ծեր Գուլեանցի տրամադրութիւնը,—այդ մեզ հեղինակը չէ ցոյց տալիս, այդ բեմի ետևից է կատարվում և յայտնի է միմիայն հեղինակին: Այն հանգամանքը որ Աթոյեանց հարուստ է և գիւղ ունի քաղաքում, իսկ Ջանումեանց իր աշխատանքով է ապրում, գիւղ չունեցող և օտարական է,—այդ նոր հանգամանք չէ, այդ բոլորը արդէն յայտնի էր Գուլեանցին, երբ նա դեռ առաջին գործողութեան մէջ դառն կերպով խօսում էր Աթոյեանցների վրա. «բարեկամներ, լաւ բարեկամներ, դուք միայն իմ փողն էք ուզում» և այլն....

Պիէսայի նեղ շրջանակներին նոյնպէս պէտք է վերագրել այն հնացած ձևը, որ գործ է ածում Քիշմիշեան, որ հազիւ թէ մի ծանր կօմեդիայի մէջ որ և է հեղինակ այժմ թոյլ տար իրան. Գուլեանցին համոզելու համար որ Աթոյեանց անպիտան է, նա ստիպում է վերջինին ամենաանվայել կերպով վարվել Գուլեանցի բնակարանում, իսկ Գուլեանցին ստիպում է կանգնել դրան մօտ և լսել բոլորը, ինչ որ ասում է Աթոյեանց, ինչ անպատիւ առաջարկութիւններ է անում նա օր. Բերոյեանցին: Այդ ձևը կարելի է գործածել միմիայն վօդևիլներում, կամ գործ էր ածվում շատ հին պիէսաներում: Այդ ձևն էլ մեր հեղինակը, երևի, գործ է ածում պիէսան կարճ կտրելու համար:

Երկու պառաւները կաֆէ խմում են բեմի ետևից, իսկ այդ ժամանակ մի շատ յատկանիշ խօսակցութիւն պիտի կատարվէր նրանց մէջ, որ և կը պարզէր մեզ թէ ինչպէս է եղել որ Գուլեանցի տրամադրութիւնը դէպի Աթոյեանցները յանկարծակի փոխվեց:

Ես չեմ պահանջում, ինչպէս մի քանիները ասում էին, որ հեղինակը մեզ ցոյց տար թէ երկու տարվայ ընթացքում Ջանումեանց ինչպէս էր ներգործում հետզհետէ Սօֆիայի վրա, բայց այնու ամենայնիւ կարելի էր սպասել որ հեղինակը, գոնէ մի դիալօգում, Սօֆիայի և բժշկի մէջ, ցոյց տար մեզ թէ այդ վերջինը ինչ բարոյական զօրեղ ներգործութիւն ունի այն էակի վրա, որ նա հետզհետէ իր համար է պատրաստում....

Առաջին գործողութեան մէջ Սօֆիայի և Վարդուհու միմեանց հետ հանդիպելը հոգեբանապէս անբնական և անճիշդ է: Երկար ժամանակ իր ընկերուհուն չը տեսած, բնական է որ Սօֆիան նախ և առաջ հարց ու փորձ անէր Վարդուհուն թէ ինչպէս է ապրում գիւղում, արդեօք չէ ձանձրանում մենակութեան, առանձնութեան մէջ, հեռու ինտելիգենտ շրջանից, ինչպէս է նա զգում իրան գիւղում, գոհ է արդեօք իր յանձն առած ծանր պաշտօնից, ինչպէս են նրա սաները և այլն: Բայց